DOI: 10.53548/0320-8117-2024.1-391

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ, Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում, Երևան, ՀԱԻ հրատ., 2023, 388 էջ:

Մարդկանց խմբերի կամ անհատների տեղաշարժերը մարդկության պատմության շարունակական գործընթացներից են: Դրանց և՛ պատճառները, և՛ հետևանքները պատմաքաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային հենք ունեն: Միգրացիոն գործընթացները՝ տարերային կամ ուղղորդված, մշտապես արդիական են և իրավիճակ են թելադրում անհատի ու ընտանիքի, պետության ու հասարակության կյանքում: Այդ շարժընթացների ակտիվ դրսևորումներից է աշխատանքային միգրացիան: Հայաստանի գիտական հանրույթի՝ աշխատանքային միգրացիային նվիրված ուսումնասիրությունները մեծավ մասամբ շեշտադրում են դրա սոցիալ-տնտեսական տեսանկյունը, և վաղուց հասունացել էր միգրացիայի պատճառները և դրա հետևանքով առաջացած էթնոմշակութային խնդիրները և փոփոխությունները գիտականորեն վերլուծելու անհրաժեշտությունը: Այդ հիմնախնդիրներն է շուրջ չորս տասնամյակ (1980-2020 թթ.) հետազոտում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Միհրան Գալստյանը: Նա իր գիտական հարուստ վաստակը համալրեց ևս մեկ հիմնարար աշխատությամբ՝ «Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում»:

Ուսումնասիրությունը շուրջ չորս տասնամյակի ընթացքում ՀԽՍՀ և ՀՀ բոլոր վարչատարածքային միավորներում (ընտրանքը՝ շուրջ 20 քաղաքային և 55 գյուղական բնակավայրեր) անցկացված շարունակական հետազոտությունների արդյունք է. էթնոսոցիոլոգիական հարցումներ՝ 1728 ընտանիքում, 39 ֆոկուսխմբային և 136 խորացված հարցազրույցներ: Հետազոտության մեջ ընդգրկվել են նաև ՀՀ 8 քաղաքներում և 22 գյուղերում բնակվող էթնիկ փոքրամասնությունները (եզդիներ, քրդեր, ասորիներ, հույներ, ռուսներ, ուկրաինացիներ. ընտրանքը՝ 382 ընտանիք): Օգտագործվել են նաև հայ և օտարալեզու գրականություն, արխիվային սկզբնաղբյուրներ, մամուլ, իրավական փաստաթղթեր, առցանց ռեսուրսների տվյալներ: Բոլոր խնդիրների վերլուծությունները թվային ցուցանիշներով ներկայացված են աղյուսակներում և գրաֆիկական պատկերներում՝ ստեղծելով տվյալների հարուստ բազա: Դրանք ներկայացված են գյուղի և քաղաքի, մասնագիտական և սեռատարիքային կազմի, ընտանեկան և սոցիալ-մասնագիտական կարգավիճակի և մի շարք այլ ցուցանիշների համատեքստում:

Առաջադրված նպատակն է «բացահայտել Հայաստանի աշխատանքային միգրացիայի հետևանքով միգրանտների և նրանց ընտանիքների, էթնոսի և հասարակության մակարդակով տեղի ունեցող էթնոմշակութային և սոցիալական փոփոխու-

թյունները նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների լայն համեմատական համատեքստում» (էջ 9):

Մ. Գալստյանը հինգ գլուխներում ներկայացնում է միգրացիայի տեսական ուղղությունները և մեթոդաբանական հենքը, քննարկում միգրացիայի տեսակների եզրութաբանական խնդիրները, վերլուծում աշխատանքային միգրացիայի պատմական զարգացման առանձնահատկությունները, վեր է հանում աշխատանքային միգրանտների սոցիալական և էթնոժողովրդական բնութագիրը, միգրացիայի պատճառները և սոցիալ-տնտեսական ու մշակութային հետևանքները:

Ուսումնասիրելով նախախորհրդային շրջանի (XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. սկիզբ) արխիվային, մամուլային, վիճակագրական նյութերը՝ հեղինակը նշում է, որ այդ փուլում արտագնացության պատճառ էին դիտվում աղքատությունը, հողի սակավությունը, բարձր հարկերը, պարտքերը և այլն: Արևելյան Հայաստանի բնակչության որոշ մասը ստիպված էր աշխատանք փնտրել Ռուսաստանի և Այսրկովկասի արդյունաբերական խոշոր կենտրոններում, իսկ Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանից հիմնականում պանդխտության էին մեկնում Կոստանդնուպոլիս: Պանդխտության հատկապես մեկնում էին այն ընտանիքներից, որտեղ կար երկու և ավելի աշխատունակ հասակի տղամարդ, և հաճախ ընտանիքի անդամների միջև տեղի էր ունենում աշխատանքի բաժանում: Դրա հետևանքով գյուղական միջավայր ներթափանցեցին քաղաքային մշակույթի նոր տարրեր՝ ազդելով նրանց սոցիոնորմատիվ վարքագծի վրա, առաջացնելով արժեքային կողմնորոշումների փոփոխություններ և խթանելով նոր լեզուների յուրացումը: Ազգագրական նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն Հայաստանում նաև նպաստեց նահապետական գերդաստանների քայքայման և փոքր ընտանիքների ձևավորման գործընթացին: Հետևաբար փոխվեց նաև այդ համայնքների բնակչության սեռատարիքային կազմը, քանի որ գյուղական երիտասարդության մի մասը հետագայում մշտական բնակություն հաստատեց արդյունաբերական խոշոր քաղաքներում՝ հանգեցնելով համայնքներում տարեցների տեսակարար կշռի աճին:

Հեղինակը անդրադառնում է նաև Խորհրդային Միության կազմում ընդգրկվելուց հետո Հայաստանից տեղի ունեցող արտագնացությանը՝ ուղղված ԽՍՀՄ աշխատանքային ռեսուրսների պահանջարկ ունեցող տարածքներ. տարեկան լեռնային և նախալեռնային շրջանների գյուղական բնակավայրերից մեկնում էր մոտ 25-30 հազ. մարդ: Խորհրդային կարգերի պայմաններում աշխատանքային միգրացիան Հայաստանի գյուղական բնակչության շրջանում նպաստեց նաև ստրատիֆիկացիոն (շերտավորման) գործընթացների ձևավորմանը զբաղվածության ոլորտներում և սոցիալ-մասնագիտական կազմի փոփոխություններին: Հեղինակը էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների հիման վրա հանգել է այն եզրակացության, որ խորհրդային գյուղական համայնքներում արտագնացությամբ զբաղվողները վերածվել էին առանձին սոցիալ-մասնագիտական խմբի. նրանք մյուսներից տարբերվում էին զբաղվածության բնույթով, կենսակերպով, եկամտի աղբյուրներով, համայնքային կյանքին մասնակցության և արժեհամակարգի առանձնահատկություններով: Արտագնա համայնքները, ի տարբերություն մյուսների, առանձնանում էին բարեկեցության բարձր մակարդակով և արտաքին տեսքով, որոնց բնորոշ էին քա-

ղաքային ապրելակերպի որոշ տարրեր՝ երկհարկանի առանձնատներ, մեքենաներ, արտասահմանյան կահույք և այլն: Վաստակի այդ միջոցներով մի շարք գյուղական համայնքներում ստեղծվեցին նորակառույց թաղամասեր, որտեղ հիմնականում բնակվում էին երիտասարդ ընտանիքները: Շնորհիվ այս գործընթացների՝ գյուղական համայնքները դուրս եկան տեղային մեկուսացումից և ներգրավվեցին սոցիալ-մշակութային փոխհարաբերությունների նոր գոտի: Դրա միջոցով համայնքից դուրս ավելացան հաղորդակցման ուղիները՝ հանգեցնելով գյուղական ընտանիքների շրջանում նոր մշակութային պրակտիկաների փոխանցման և հայրենի միջավայրում արժեքների բազմազանության ձևավորման:

Հեղինակը մանրամասնորեն վերլուծել է նաև հետխորհրդային շրջանում Հայաստանից աշխատանքային միգրացիայի գործընթացները, որը, ըստ հետազոտության արդյունքների, պայմանավորված էր անկախության առաջին տարիներին ստեղծված պատերազմական իրավիճակով, տնտեսական ճգնաժամով, գործազրկության բարձր մակարդակով և աղքատությամբ: Եթե խորհրդային տարիներին այն հիմնականում ընդգրկում էր լեռնային և նախալեռնային շրջանների գյուղական բնակավայրերը, ապա ուշխորհրդային և հետխորհրդային փուլում դրան մասնակցեց Հայաստանի գրեթե բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակչությունը: Հարցված ընտանիքներից յուրաքանչյուր երրորդն արտերկրում ունի 1-2 աշխատանքային միգրանտ: Ի տարբերություն խորհրդայինի՝ հետխորհրդային շրջանում հայերի հետ աշխատանքային միգրացիային ակտիվ մասնակցում են նաև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները՝ ռուսները, եզդիները, քրդերը, ասորիները, հույները: Ըստ հեղինակի՝ գործազրկության պայմաններում աշխատանքային միգրացիան խթանել են նաև հայերի և հայաստանաբնակ որոշ ազգային փոքրամասնությունների (եզդիներ, քրդեր) ընտանիքի կառուցվածքի առանձնահատկությունները, մասնավորապես մի հարկի տակ ապրող երկու-երեք սերունդների առկայությունը: Եթե խորհրդային շրջանում ընտանիքի տղամարդկանցից մեկը մնում էր տեղում տնտեսություն վարելու և ուներ նաև վարձատրվող աշխատանք, ապա հետխորհրդայինում այդ մոտեցումը փոխվեց, քանի որ դրան մասնակցում են ընտանիքի համարյա բոլոր այն չափահաս տղամարդիկ, որոնք հնարավորություն ունեն մեկնելու հանրապետությունից դուրս՝ աշխատանքի:

Հեղինակը վերլուծել է նաև արտագնացների սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական խմբերի բնութագիրը: Հետազոտության արդյունքներով միգրանտների շրջանում գերակշռում են երիտասարդ տղամարդիկ, և, կարել է ասել, Հայաստանից միգրացիայի այդ ձևն ունի հստակ գենդերային ուղղվածություն: Վերջինս հեղինակը բացատրում է ընտանիքում տղամարդկանց և կանանց զբաղեցրած կարգավիճակի և ըստ սեռային հատկանիշի աշխատանքի բաժանման վերաբերյալ գոյություն ունեցող ավանդական պատկերացումներով: Ավանդական արժեքների և գենդերային դերերի պատկերացումների շրջանակում ընտանիքի, ազգակիցների և հասարակության կողմից հատկապես գյուղաբնակ կանանց աշխատանքային միգրացիան Հայաստանում չի խրախուսվում: Այնուհանդերձ, առանձին դեպքերում կանայք աշխատանքային միգրացիայի ստիպված են մեկնում, քանի որ ընտանիքը ապրելու այլ ելք չունի. այն միջոց է տանը մնացած հարազատներին օգնելու: Փոխվել են նաև աշխատանքային միգրանտների կրթական մակարդակը և սոցիալ-

մասնագիտական կազմը: Խորհրդային տարիներին աշխատանքային միգրանտների մեջ բարձր տոկոս են կազմել միջնակարգ-մասնագիտական կրթություն ունեցող աշխատողները և արհեստավորները, ուշխորհրդային և հետխորհրդային փուլերում միջնակարգ և բարձրագույն կրթությամբ միգրանտների թիվն ավելանում է ի հաշիվ արտադրության, գիտության, կրթության, սպասարկման, կառավարման և այլ ոլորտների մասնագետների: Սակայն վերջիններս ընդգրկվում են ցածր որակավորում ունեցող բանվորական աշխատանքներում:

Հեղինակը ուշագրավ դիտարկում է արել նաև երիտասարդների՝ առաջին անգամ աշխատանքային միգրացիայի մեկնողների վերաբերյալ. այն համայնքում և ընտանիքում համարվում է որպես անցումային տարիքից դուրս գալու և «մեծերի աշխարհ» մտնելու ինքնատիպ նախաձեռնություն: Օտար միջավայրում՝ ընտանիքից առանձին երիտասարդների ինքնուրույն կյանք վարելը, փող վաստակելը, աշխատանքային որոշակի դժվարություններ հաղթահարելը, շփումները, նոր մասնագիտական ունակություններ ձեռք բերելը համայնքում ընկալվում են որպես սոցիալական հասունության և ինքնուրույնություն ձեռք բերելու կարևոր որակներ: Իսկ աշխատանքային միգրացիայի միջոցով հարսանեկան արարողությունների, առանձին բնակարան կառուցելու/գնելու համար ինքնուրույն գումարներ վաստակելը ընտանիքը և համայնքն ընկալում են տարիքային հասունացման կարևոր ցուցիչ, այսինքն՝ նրանք արդեն պատրաստ են անցում կատարելու ամուսնացողների խումբ և ընտանիք կազմելու համար հասուն մարդ են:

Հեղինակն առաջին անգամ հետազոտության դաշտ է բերում միգրացիային առնչվող էթնիկական և սոցիալ-մշակութային մի շարք խնդիրներ: Դրանցից են *աշխատանքային միգրանտների խմբերի (բրիգադների) ձևավորման սկզբունքները*՝ ըստ ազգակցական (ընտանեկան-ազգակցական, ընկերային-հարևանային, տարբեր էթնիկ հանրույթների ներկայացուցիչներից բաղկացած) և մասնագիտական ու գործունեության ժամկետների առանձնահատկությունների: Վերհանվում են այդ խմբերի աշխատանքային և փոխօգնության ներքին կանոնները:

Մ. Գալստյանն անդրադարձել է աշխատանքային միգրացիայի գործում կարևոր դեր ունեցած *էթնիկ սոցիալական ցանցին*, որը նախկինում բավարար չափով չի հետազոտվել: Ըստ հեղինակի՝ սոցիալական ցանցերը ձևավորվել են երեք փուլով՝ 1960-1970-ական թթ., մինչև 1990-ականները և դրանից հետո՝ աշխատանքային միգրանտներից, զինվորական ծառայության, կրթության, ամուսնության նպատակներով մեկնածներից, 1988-ի երկրաշարժի հետևանքով Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից աղետի գոտի ժամանած մասնագետների հետ կապեր հաստատած միգրանտներից: Ցանցն ուղղորդում է մարդուն մուտքի երկիր ընտրելու, նոր միջավայրում ինտեգրվելու, կեցության, ֆինանսական և այլ հարցերում: Մ. Գալստյանը, քարտեզագրելով Հայաստանից մեկնող խմբերի տեղաշարժերը, դուրս է բերել մի պատկեր, ըստ որի՝ Հայաստանի յուրաքանչյուր բնակավայր ունի իր միգրացիոն ուղղությունները, «որի հետևանքով նրանց մի մասը արտերկրում ձևավորում է «նոր համայնքներ»: Հեղինակը եզրակացնում է, որ այն տեսակետը, թե սոցիալական ցանցերը միայն դրական դեր են կատարում միգրանտների համար, իրականությանն այնքան էլ չի համապատասխանում, քանի որ երբեմն ենթարկվել են աշխատանքային շահագործման, կամ պայմանագրի

բացակայության պայմաններում գործատուները մինչև վերջ չեն վճարել:

Մ. Գալստյանը վերհանել է նաև հայերի և ՀՀ-ի էթնիկ փոքրամասնությունների աշխատանքային միգրանտների շրջանում *եկամուտների և ծախսերի տնօրինման էթնոմշակութային առանձնահատկությունները*: Եթե խորհրդային շրջանում գումարն ավելի շատ ուղղվում էր զավակների կամ հենց միգրանտի համար տուն կառուցելուն, ամուսնական ծախսերին, ապա հետխորհրդայինում այդ ավանդույթը թեև պահպանվել, սակայն փոքր-ինչ ձևափոխվել է՝ տեղը զիջելով նրանց առաջնային կարիքների բավարարմանը: Ծախսերի բաշխման հարցում, կապված որոշ սովորույթների հետ, մի ուշագրավ միտում է ի հայտ եկել. տավուշցիները, որոնք Վարդավառը մեծ շուքով են նշում, առանձին գումար են հատկացնում նաև Վարդավառի ծախսերին:

Հեղինակը առանձին քննարկման առարկա է դարձրել միգրացիայի՝ որպես նոր մշակութային պրակտիկաների տարածման խնդիրը: Շնորհիվ աշխատանքային միգրացիայի՝ նրանք սեփական կենցաղամշակութային համալիր են ներմուծում նոր մշակութային պրակտիկաներ, որի վրա իրենց ազդեցությունն են թողնում միգրացիայի տևողությունը, միգրանտի տարիքը և կրթական մակարդակը, այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության հետ շփման ինտենսիվությունը: Դրանք նպաստում են անդրմշակութային մի նոր տարածքի ձևավորմանը, երբ միգրանտները միաժամանակ կրում են և՛ իրենց ազգային, և՛ ընդունող հասարակության մշակութային արժեքները: Հետազոտությունը ցույց է տվել, որ աշխատանքային միգրացիայի հետևանքով անխուսափելի են դառնում միջէթնիկ ամուսնությունները, որոնք թե՛ հայ, թե՛ էթնիկ փոքրամասնությունների միգրանտների մեծ մասի ընտանիքները բացասաբար են ընկալում՝ կապված մշակութային փոխազդեցության հետևանքով ազգային ավանդույթների և լեզվի լուսանցքայնացման, երեխաների կրկնակի էթնիկ ինքնագիտակցության ձևավորման, ուծացման վտանգի հետ: Էթնիկ ինքնության պահպանմանն ուղղված քայլերից են արտերկրում բնակություն հաստատած միգրանտների՝ հայրենիքի հետ կապի պահպանումը, դրսում մահացածին հայրենիքում հուղարկավորելը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ թաղման կենոտաֆ ծեսի կատարումը, արտերկրում պետական, ազգային և եկեղեցական տոների ու ծեսերի, հիշատակի օրերի նշումը (Վարդավառ, Հայաստանի անկախության օր, Մեծ եղեռնի և 1988-ի երկրաշարժի զոհերի ոգեկոչման օրեր, պսակ, մկրտություն և այլն), որոնց, ի դեպ, մասնակցում են նաև նախկինում հայաստանաբնակ էթնիկ փոքրամասնությունների միգրանտները:

Աշխատանքային միգրացիայի հետևանքով առաջացած թերևս ամենամեծ մարտահրավերներից և առանցքային թեմաներից են ընտանիքի մոդելում կատարվող փոխակերպումները: Մ. Գալստյանը, վերլուծելով այդ խնդիրը, նշում է, որ այն իր բացասական ազդեցությունն է թողնում ընտանիքի կառուցվածքի, բարոյահոգեբանական մթնոլորտի, ներընտանեկան հարաբերությունների, երեխաների դաստիարակության, կրթության, ընտանիքի կայունության վրա: Արձանագրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են երկրորդ ընտանիքի առկայությունը, ամուսնալուծությունների աճը, լքված ու կիսված ընտանիքները, կանանց և մեծահասակների ներգրավվածության ընդլայնումը տնտեսական աշխատանքներում, հաճախ ընտա-

նիքի համար կարևոր կենսափուլերում (զավակի ծնունդ, նշանադրություն, ամուսնություն և այլն) ընտանիքի գլխավորի բացակայությունը:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ Մ. Գալստյանը եզրակացրել է, որ աշխատանքային միգրացիան անհատական, ընտանեկան, էթնիկական և հասարակական մակարդակներում սոցիալ-մշակութային և էթնիկական գործընթացների վրա ունենում է երկակի ազդեցություն: Որպես դրական արդյունք են դիտարկվում Հայաստան մտնող տրանսֆերները, ընտանիքի ֆինանսական դրության բարելավումը, բարեգործությունը հայրենի բնակավայրում, գործարարության խթանումը, մշակութային հաղորդակցությունը, լեզվի իմացությունը, աշխատանքային և մասնագիտական փորձի հարստացումը, նոր կապերի հաստատումը և այլն: Բացասական հետևանքներից են էթնիկ արժեքների փոփոխությունը, ամուսնալուծությունների աճը, սոցիալ-ժողովրդագրական խնդիրների ավելացումը, գյուղական բնակավայրերում երիտասարդ բնակչության նվազումը և այլն:

Աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային գործընթացներին նվիրված գիտահետազոտական սույն աշխատանքը մասնագիտական առաջարկներ, նոր հարցադրումներ, համակողմանիորեն փաստարկված եզրահանգումներ պարունակող համապարփակ աղբյուր է, որը մեծապես օգտակար կլինի ոչ միայն գիտական շրջանակի, այլև միգրացիային, մասնավորաբար աշխատանքային միգրացիային առնչվող գործառույթներ իրականացնող պետական կառույցների համար: Հեղինակը ներկայացրել է նաև վերջիններիս հասցեագրված առաջարկներ՝ աշխատանքային միգրացիայի օրենսդրության մշակում, միգրանտների շրջանում կիրառվող արհեստների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում՝ նրանց ներուժը տեղում իրացնելու նպատակով, որոշ մասնագիտությունների գծով պատվերների իջեցում արհեստագործական ուսումնարաններին ու քոլեջներին և այլն: Եռալեզու ամփոփումը (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հնարավորություն է տալիս աշխատանքում առաջադրված հիմնադրույթները հասանելի դարձնելու ոչ միայն հայ, այլև անգլիալեզու և ռուսալեզու գիտական հանրույթին:

ՀԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
hasmikabrahamyan@yandex.ru